ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մայիսի 2023 թվականի N 807 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 25-Ի N 570-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 25-ի «Հարկային մարմնի գործունեության շրջանակներում ռիսկի վրա հիմնված համալիր հարկային և տրանսֆերային գնագոյացման ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին» N 570-Ն որոշման N 1 հավելվածում կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները՝

1) 5-րդ կետում՝

ա. «հարկային հաշվարկների» բառերից հետո լրացնել «, հաշվարկային փաստաթղթերի տվյալների, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով այլ տեղեկությունների» բառերով,

բ. հանել «ըստ հարկային հաշվարկների» բառերը.

2) 7-րդ կետից հանել «ներկայացրած հարկային հաշվարկների» բառերը.

3) 8-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) յուրաքանչյուր հարկ վճարող պետք է ունենա իր գործունեության տեսակին, կատարված գործարքներին և հարկման ռեժիմին բնորոշ և կիրառելի ռիսկային չափանիշներ.».

4) 9-րդ և 30-րդ կետերից հանել «կենտրոնական» բառը.

5) 11-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 20-րդ ենթակետով.

«20) արհեստական բանականության և մեքենայացված ուսուցման գործիք-ների կիրառմամբ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի տվյալների բազայի վերլուծության արդյունքում արտասովոր (անոմալ) գնահատված ցուցանիշները:».

6) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 12.1-ին կետով.

«12.1. Սույն գլխի դրույթները չեն տարածվում 11-րդ կետի 20-րդ ենթակետով սահմանված չափանիշի վրա:».

7) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 16.1-ին կետով.

«16.1. Սույն գլխի դրույթները չեն տարածվում 11-րդ կետի 20-րդ ենթակետով սահմանված չափանիշի վրա:».

8) IX գլխի վերնագրում «ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ» բառերը փոխարինել «ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ» բառերով.

9) 17-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«17. Հարկ վճարողների ռիսկայնության միավորը հաշվարկվում է որպես առանձին չափանիշների ռիսկային միավորների հանրագումար, որը հարկային մարմնի սահմանած կարգով կարող է փոփոխվել 11-րդ կետի 20-րդ ենթակետով սահմանված չափանիշով գնահատման արդյունքների հիման վրա:».

10) 18-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«18. Գնահատված ռիսկային միավորները, ինչպես նաև 11-րդ կետի 20-րդ ենթակետով սահմանված չափանիշով գնահատման արդյունքները պահվում են հարկային մարմնի տվյալների բազայում:».

11) ուժը կորցրած ճանաչել 19-23-րդ կետերը.

12) X գլխի վերնագրում «ԳՆԱՀԱՏՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ» բառերը փոխարինել «ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ» բառերով.

13) 25-րդ կետում «Ըստ հաշվարկների՝ բարձր» բառերը փոխարինել «Բարձր» բառով.

14) 26-րդ կետում «, ինչպես նաև հարկային մարմնի հետ հորիզոնական մոնիթորինգի համաձայնագիր կնքած կազմակերպությունները, համաձայնագրի գործողության ժամանակահատվածում,» բառերը փոխարինել «հարկ վճարող-ները,» բառերով.

15) 29-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետից հանել «, այդ թվում՝ նաև ըստ հարկ վճարողների հաշվառման հարկային տեսչությունների» բառերը,

բ. 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) 11-րդ կետի 20-րդ ենթակետով սահմանված չափանիշով գնահատման արդյունքների հիման վրա ռիսկային միավորների հանրագումարի փոփոխու-թյունների իրականացումը.»,

գ. 3-րդ ենթակետից հանել «ըստ հարկային հաշվարկների սահմանված համամասնության և ըստ որոշված» և «թվի՝ հարկ վճարողների» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

25.05.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ